



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

24 ՀՈՒԼԻՍԻ 2018թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին Լավրենտի Գևորգյանը, Էդգար Խաչատրյանը, Հարություն Հովհաննիսյանը, Անդրանիկ Մկրտչյանը, Արամ Սարգսյանը, Լևոն Վարդանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էր համայնքի ղեկավարի տեղակալ Կարեն Հարությունյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Նորայր Սարգսյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Վարդան Մուրադխանյանը:

1.Լսեցին

ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի N 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ **Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.**

1.Հաստատել համայնքի ավագանու 2018 թվականի հուլիսի 24-ի N 8 արտահերթ նիստի օրակարգը.

1) Եղվարդ համայնքում քաղաքացիների կոմից պետական և համայնքային շինությունների ապօրինի զբաղեցման գործընթացի ուսումնասիրման նպատակով ձևավորվող հանձնաժողովի կազմում թեկնածուներ առաջադրելու մասին:

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում Եղվարդ համայնքի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին:

3) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 35/

2.Լսեցին

ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ԶԲԱՂԵՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՁԱՎՈՐՎՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի՝ Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.

Եղվարդ համայնքում քաղաքացիների կողմից պետական և համայնքային շինությունների ապօրինի զբաղեցման գործընթացի ուսումնասիրման նպատակով ձևավորվող հանձնաժողովի կազմում առաջադրել Եղվարդ համայնքի ավագանու անդամներ Լավրենտի Գևորգյանի, Ռաֆիկ Զոհրաբյանի, Հարություն Հովհաննիսյանի, Վարդան Մարտիրոսյանի, Անդրանիկ Մկրտչյանի, Արամ Սարգսյանի, Պետրոս Ստեփանյանի, Լևոն Վարդանյանի թեկնածությունները:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 36/

3.Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԱՆԴԱՄ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018 թվականի հուլիսի 11-ի N 01/13.2/3130-18 գրությունը՝ Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում Եղվարդ համայնքի ոչ պետական հատվածը ներկայացնելու համար առաջադրել Սուսաննա Աշոտի Գևորգյանի թեկնածությունը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 37/

4.Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2.1 կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին) Եղվարդ համայնքում գործող Սուրբ Սարգիս եկեղեցու պահպանման և սպասարկման համար անհատույց (մշտական) օգտագործման տրամադրել համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0390-0001 կադաստրային ծածկագրից 0,5174 հա, 0390-0007 ծածկագրի տակ գտնվող 0,51 հա և 0390-0004 ծածկագրի տակ գտնվող 1,0536 հա հողամասից 0,13822 հա հողամասերը, ընդամենը՝ 1,16562 հա:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 38/

Ավագանու անդամներ

ԱՇՈՏ ԱԶԻԶՅԱՆ

ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՇԱԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ՌԱՖԻԿ ԶՈՀՐԱԲՅԱՆ

ՍՐԱՊ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԳՈՌ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՊԵՏՐՈՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Վարդան Մուրադխանյանը